0

ՊԱՑԻԵՆՏԻ ԶԵՌՆԱՐԿ

ԱՅՆ ԱՄԵՆԸ, ՈՐ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ

"ԱՋԱՓՆՅԱԿ" Բժշկական Կենտրոն, Վիրաբուժական բաժանմունք

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
Table of Contents

- *Ներածություն* 2
- *Վիրաբուժական բաժանմունքի Կանոնակարգ* 3
- *Արգելվում է* 4
- *Թույլատրվում է* 5
- *Մինչ Վիրահատություն* 6
- *Տան պայմաններում* 6
- *Հիվանդանոցային պայմաններում* 7
- *Վիրահատություն* 10
- *Վիրահատությունից հետո* 11
- *Տուն գնալու ժամանակ* 12
- *Որոշ Տեղեկատվություն* 14
- *15*

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0017, Աբելյան փողոց 8/1
Հեռ. (010) 38-00-88, 38-00-44, 38-00-04, (099) 38-00-44
E-mail: info@ajapnyakmc.com
WEB: www.ajapnyakmc.com

ԾԱՆՈԹԱՑՈՒՄ

Շնորհակալություն, որ Ձեր ընտրությունը կանգ է առել “ԱՋԱՓՆՅԱԿ” Բժշկական Կենտրոնի վրա:

Աջափնյակ Վարչական շրջանը՝ Երևանի հյուսիսարևմտյան վարչական շրջաններից մեկը, որտեղ գտնվում է նույնանուն Կենտրոնը, գտնվում է Երևան քաղաքի գողտրիկ մասում՝ Հրազդան գետի աջակողմյան մասում (որտեղից էլ՝ Աջափնյակ, այսինքն՝ աջ ափին գտնվող, անվանումը):

«Աջափնյակ» բժշկական կենտրոնը հիմանդրվել է 2020 թվականին Մանուկյանների ընտանիքի կողմից, որոնք, ընտրելով Աջափնյակ վարչական համայնքում դատարկ հողատարածքը, հիմնվելով գերմանական բժշկական ճարտարապետական խստագույն և լավագույն փորձի վրա, 8 տարի շարունակ հիմքից կառուցել են կենտրոնը, որտեղ ամեն մի անկյուն և ցանկացած սենյակ ունի բազմակողմանի հաշվարկված էրգոնոմիկական և նպատակային հաշվարկ՝ միտված պացիենտի հարմարավետությանը, անվտանգությանը, բժշկական սպասարկման բարձրագույն մակարարդակի ապահովմանը:

«Աջափնյակ» բժշկական կենտրոնը զբաղեցնում է ավելի քան 4000 ք.մ. տարածք, բաղկացած է վեց հարկերից, հիմնական և օժանդակ կառույցներից: Կենտրոնում գործում է շուրջօրյա անվտանգություն, աշխատում են ժամանակակից տեսահսկման, հակահրդեհային, հեռախոսային, ինտերնետային և այլ գերժամանակակից հաղորդակցման և ահազանգման համակարգեր:

Կենտրոնը համագործակցում է մի շարք լավագույն բժշկական կենտրոնների հետ ***ԱՄՆ-ում, ՌԴ-ում, Գերմանիայում, Իտալիայում,*** որոնց հետ մեր մասնագետները տեսակապի միջոցով քննարկում են բոլոր խնդրահարույց դեպքերը, վիրահատական ընթացքը և պլանավորումը:

«Աջափնյակ» բժշկական կենտրոնը համագործակցում է բոլոր ապահովագրական ընկերությունների հետ, ունի **պոլիկլինիկական օղակ**, որը սպասարկում է պետպատվերի շրջանակներում Երևան քաղաքի բնակչության որոշ մասին:

«Աջափնյակ» բժշկական կենտրոնի **վիրաբուժական բաժանմունքի** բոլոր տեսակի վիրահատական ծառայությունները յուրաքանչյուր փուլում կատարվում են բարձրագույն ստանդարտներով, որոնց փորձը ընդօրինակվել է աշխարհոչակ լավագույն կենտրոններից և, իհարկե, ադապտացվել են հայ պացիենտի և հայկական կարգերի համար: Մենք ստեղծել ենք բոլոր պայմանները, որոնք հանդիսանում են հիմնական առհավատչյան՝ որակյալ և բարձրակարգ բուժման և բժշկական սպասարկման համար:

Վիրաբուժական բաժանմունքի ցանկացած հիվանդասենյակ ունի իրեն յուրահատուկ դիզայն և կոնցեպցիա, միտված է ապահովելու խնամյալի հարմարավետությունը, որպեսզի հնարավորինս քիչ նմանեցնի հիվանդանոցային տարածքի, ունենա միայն բարի հիշողություններ:

Վիրաբուժական Բաժանմունքի Կանոնակարգ

Գտնվելով «Աջափնյակ» բժշկական կենտրոնի վիրաբուժական բաժանմունքում, որտեղ հրավիրված են աշխատանքի միայն լավագույն և ամենափորձառու մասնագետները և պատրաստվելով վիրահատական միջամտության՝ յուրաքանչյուր այցելու և պացիենտ պետք է ծանոթանա որոշ կանոնակարգերի, որոնք պարտադիր են համարվում:

Յուրաքանչյուր պացիենտին մենք ապահովում ենք

- *Սննդով, որը հատուկ հաշվարկված է հետվիրահատական ընթացքի առանձնահատկություններից, կոնկրետ վիրահատության տեսակից , Ձեր նախասիրություններից և ֆիզիոլոգիական առանձնահատկություններից ելնելով (ալերգիա, տարիքային սահմանափակումներ, հարակից հիվանդություններ և այլն): Սնունդը մատուցվում է հատուկ սկուտեղի վրա և բավարարում է կալորիական առավելագույն ռացիոնի պահանջները: Մենք չենք առարկում, եթե այցելուները իրենց հետ պացիենտի համար բերեն որոշ հյութեր և թեթև ուտելիքներ, որոնք հիվանդի համար անվնաս են, թույլատրելի բժշկի կողմից և չեն հակասում ընդհանուր սնման կանոնակարգին (հիպոալերգիկ, առանց տհաճ կամ բուրավետ բաղադրիչի և ընթակա են օգտագործման նշված ժամերին)*

- *Մեկանգամյա հիգիենայի պարագաներով, ատամի խոզանակով, հեղուկ օճառով, ալկոգելով, սրբիչով և այլն: Հիգիենայի պարագաները տրվում են ամեն օր:*

- *Ներհիվանդանոցային կացության ընթացքում պարտադիր հանդիսացող ներհիվանդանոցային հագուստով, անկողնային սպիտակեղեղենով: Հագուստի և սպիտակեղենի մաքրությունը ենթարկվում են մանրակրկիտ ախտահանման, բարձրաստիճան ջերմային մշակման ավտոմատ սարքերով, կատարվում է ուլտրամանուշակագույն ալիքներով մանրէազերծում և ստուգում:*

- *Սենյակների ամենօրյա մաքրության ապահովումով, որը կատարվում է հիպոալերգիկ լուծույթներով:*

- *Իհարկե, բոլոր պացիենտները իրենց հիմնական հիվանդության հետ կապված դեղորայքը, ինչպես նաև ստորին վերջույթների համար բինտավորման գուլպաները նույնպես ստանում են մեր կողմից:*

- *Վիրաբուժական բաժանմունքում գործում է անվճար WiFi արագ ինտերնետային կապ: Կապի գաղտնաբառը կարող են տեղեկանալ բուժքույրական անձնակազմից:*

- *Բոլոր հիվանդասենյակներում առկա են հեռուստացույց, որով կարող եք դիտել 15-ից ավել հեռուստալիքներ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, նաև միացված են տարբեր ռադիոալիքներ:*

- *Մաքուր և հարմարավետ սանհանգույցներում միշտ առկա են բոլոր անհրաժեշտ պարագաները՝ նախատեսված խնամյալի համար:*

Հիվանդասենյակների յուրահատուկ ոճային առանձնահատկությունները նախատեսված են ապահովելու հիվանդանոցում անցակացրած ժամանակահատվածի հարմարավետությունը:

Կան երեք տեսակի սենյակներ՝ Premium, Deluxe, Deluxe Standard.

Հիվանդասենյակները նախատեսված չեն խնամողի երկարատև գտնվելու համար, քանի որ ցանկացած այցելուի համար ենթադրում է ինտենսիվ և հետևողական խնամք և հսկողություն միջին բուժանձնակազմի կողմից:

Մենք երաշխավորում ենք պացիենտի անվտանգությունը և որակյալ բուժումը:

Կենտրոնում գործում է ճաշարան, որտեղ ցանկացած այցելու, պացիենտ, խնամող կարող է հարմարավետ պայմաններում պատրաստել թեյ, սուրճ, օգտվել սառնարանից, գազօջախից և այլն: Արկա են նաև սուրճ, թեյ, զովացուցիչ

ըմպելիքներ գնելու սարքեր:

Խնամյալների՝ Բժշկական Կենտրոնում գտնվելու ընթացքում սնվելը պետք է կատարվի միայն ճաշարանում: Հիվանդասենյակում կամ այլ վայրերում սուրճ ըմպելը, սնվելը խստագույնս արգելվում է սանիտարահիգիենիկ նկատառումներով:

Վիրաբուժական բաժանմունքում առկա է նաև սառնարան, որից նույնպես ցանկացած պացիենտ կարող է օգտվել:

Ժամանցի համար նաև առկա են տարբեր ամսագրեր և թերթեր:

Ներհիվանդանոցային կացության ընթացքում հիվանդին թույլատրվում է իր հետ բերել բժշկական կենտրոն

Բուժող բժշկի հետ համաձայնեցնելուց հետո օգտագործել որոշ դեղորայքից, որոնք անհրաժեշտ են հիվանդին հարակից կամ ուղեկցող հիվանդությունների բուժման համար: Որոշ բժշկական պարագաներ կամ սարքեր, որոնք, ըստ հիվանդի կարծիքի, հանդիսանում են պարտադիր հիվանդի համար, առանց որի նրա առօրյաներա համար անհարմար և նույինսկ ռիսկային է: Օրինակ՝ գլյուկոմետր, անձնական տոնոմետր, ատամային պրոտեզներ, հենակներ, անձնական հիվանդասայլակ, լսողական սարք և այլն:

Ցանկացած տեսակի ոչ ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ Էներեգետիկ ըմպելիքների) նույնպես թույլատրելի է, որոնք, իհարկե, չեն հակասում այն հետվիրահատական սննդակարգին, որը բնորոշ է տվյալ վիրահատական տեսակին:

Փափուկ խաղալիքները թերևս միակ նվերն է, որը թույլատրվում է ունենալ պացիենտի մոտ կացության ցանկացած շրջանում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բոլոր այն պարագաները, կամ նյութերը, որոնք մենք չենք թվարկել, խստորեն արգելված է օգտագործել կամ բերել բժշկական կենտրոն: Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար խնդրում ենք ուշադիր կարդալ այս ձեռնարկը կամ հարցնել Ձեզ հուզող հարցերի մասին բժշկական անձնակազմից:

ՀԱՎԵԼՅԱԼ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ առանձնացրել ենք խմբերով այն ամենը, ինչը չի թույլատրվում անել բժշկական կենտրոնում

Արգելվում է պատվիրել կամ օգտագործել այլ սնունդ:
Մեր պացիենտի սնունդը համարվում է բուժման բաղադրիչ, որը պետք է նպաստի պացիենտի արագ ապաքինմանը: Եթե բուժող բժիշկը համարի, որ որևէ սնունդ, որը ընդգրկված չէ ռացիոնում, սակայն կօգնի առավել արագ ապաքինմանը, ապա նա

անմիջապես Ձեզ
կտեղեակցնի:

Արգելվում է ցանկացած այցելություն 20:00-ից հետո:

Այցելությունների տևողությունը առավելագույնը **25 րոպե է**, այցելուների առավելագույն քանակը՝ մեկ: Այցելությունների ընթացքում պետք է հետևել կանոններին՝ խոսել շշուկով, խուսափել բուրավետ օծանելիքների կիրառումից, որը կարող է վտանգել մեր պացիենտների առողջությունը:

Արգելվում է բերել ցանկացած տեսակի բույսեր, փուչիկներ, բուրավետ պարագաներ կամ աղմկոտ նվերներ:

Ծխելը և ոգելից խմիչքների օգտագործումը խստիվ արգելվում է հիվանդանոցի ամբողջ տարածքում:

Ուշադրություն՝ Կենտրոնը վերապահում է իրավունք դուրս հրավիրել բոլոր այն անձանց, ովքեր մուտք են գործել կենտրոն ոգելից խմիչքի ազդեցության ներքո:

Բարձրաձայն խոսելը (նաև հեռախոսով), բարձր ծիծաղելը արգելված է:Հեռուստացույցի կամ նվագարկիչի ձայնը պետք է լինի ցածր:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ մեր պացիենտների շահերից բխող ցանկացած հավելյալ արգելքները, որոնք կապված են վիրակապությունների, համայցերի, բժիշկների զննումների կամ հետազոտությունների հետ, կարող են բերել այցելությունների Սահմանափակումների նույնիսկ նշված ժամերին:

Վճարումները կատարվում են միայն հաշվետարի մոտ (վճարման կարգի մասին հավելյալ տեղեկատվություն տես վճարումներ բաժնում ստորև) կամ փոխանցումով: Այլ վճարումներ կենտրոնում խստիվ արգելված են:

Արգելվում է խնամյալին զբաղեցնել հարևան մահճակալը առանց ադմինիստրացիայի համաձայնության: Այն դեպքերում, երբ խնամակալը ցանկանում է գիշերել պացիենտի նախատեսված է բազկաթոռ:

ՄԻՆՉ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վիրահատությունը բաժանել ենք

երեք հիմանական փուլերի

- ՆԱԽԱՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ
- ԲՈՒՆ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ
- ՀԵՏՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ

Եվ այսպես, ՆԱԽԱՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ փուլում մեր պացիենտը ստանում է կարևոր հանձնարարականներ, որոնք տնային պայմաններում մինչ բժշկական կենտրոն ընդունվելը պետք է կատարի։

Տնային պայմաններում՝

Բժշկական կենտրոն ընդունվելու նախօրեին պացիենտը **ժամը 18:00-ից** հետո չպետք է օգտագործի որևէ սնունդ, իսկ ժամը **21:00-ից** հետո՝ ոչ մի ըմպելիք։

1 *Պացիենտը պետք է լողանա, նախապես սափրի բժշկի կողմից նշված և ընդգծված վիրահատական դաշտը (այն հատվածն է մարմնի, որի վրա նախատեսվում է կատարել վիրահատություն)։ Եթե սափրելը որևիցէ պատճառներով դժվար է իրականացնել անվտանգ կամ սափրելու ընթացքում կարող է առաջանալ վերքային մակերես, ապա պացիենտը կարող սափրվել նաև հիվանդանոցային պայմաններում բուժանձնակազմի հսկողության ներքո։*

2 *Տնային պայմաններում և բժիշկի կողմից նշված որոշ դեպքերում հարկավոր է պատրաստել աղեստամոքսային տրակտ՝ կատարելով հոգնա կամ ընդունելով հատուկ լուծողական դեղամիջոցներ։*

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ***Առանց բժիշկի հավելյալ ցուցման հոգնա կամ լուծողական ընդունել պետք չէ։ Եթե պացիենտը ընդունում է որոշ դեղամիջոցներ, որոնց ընդունման համար՝ հակառակ մեր ցուցմանը պետք է ընդունել ջուր կամ որոշ սնունդ, ապա ընթացքի մասին նախապես տեղեկացրեք բուժող բժիշկին։***

3 *Նախապատրաստական փուլում շատ կարևոր է ընտրել ճիշտ ներքնազգեստ, որը հետվիրահատական շրջանում պացիենտին քիչ դժվարություններ պատճառի։ Ուստի խորհուրդ է տրվում խուսափել*

երկարաձիգ հագուստներից, երկար և նեղ վարտիքներից:

4 *Հարկավոր է բացառել ցանկացած տեսակի կոսմետիկ նյութերի օգտագործումը, մաքրել եղունքների լաքավորումը:*

- ***Առողջ և հանգիստ քունը հանդիսանում է հետվիրահատական ընթացքի կարևոր բաղադրիչը, ուստի ցանկալի է ապահովել պայմաններ, որպեսզի նախավիրահատական ընթացքում պացիենտի քունը լինի լիարժեք և հանգիստ:***

Հիվանդանոցային պայմաններում

Եվ ահա եկավ այն պահը, երբ մեր խնամյալը կամ պացիենտը այցելում է հիվանդանոց բուն նախավիրահատական հետազոտություններ և պատրաստություններ կազմակերպելու համար:

ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

- ***կանխիկ վճարման եղանակ՝ անմիջապես վճարելով դրամարկղում, ստանալով հաշվետարից ՀԴՄ կտրոնը (հաշվիչ-դրամարկղային կտրոն):***
- ***քարտային վճարման եղանակ՝ վճարելով VISA, MasterCard, ARCA վճարային համակարգով***
- ***ապառիկ տեղում՝ դիմելով մեր աշխատակցին՝ հաշված բոպեների ընթացքում ստանալով հարմարավետ վարկային պայմաններ***
- ***փոխանցում՝ դիմելով մեր հաշվապահական ծառայությանը, երբ կարող եք նախապես տրամադրված հաշվի վրա բանկային վճարում կատարելուց հետո այցելել մեզ և անարգելք ստանալ անհրաժեշտ բուժումը***
- ***ապահովագրական ընկերության միջոցով՝ նախապես տեղեկացնելով մեր աշխատակցին:***

*Շտապում ենք տեղեկացնել, որ **«Աջափնյակ»** բժշկական կենտրոնը համագործակցում է մի շարք ՀՀ գործող և միջազգային ապահովագրական*

ընկերությունների հետ, նաև ակտիվորեն մատուցում է բժշկական ծառայություն ոչ տեղացիներին (այլ երկրների քաղաքացիներին): Առավել մանրամասն տեղեկության համար կարող եք դիմել մեր ադմինիստրատորներին:

Եթե պացիենտին նախատեսվում է անցնել երկար նախավիրահատական շրջան, որի ընթացքում կարող է պարզ դառնալ, որ վիրահատությունը կարող է չկատարվել (հետազոտությունների արդյունքում հայտնաբերված լրացուցիչ առողջական շեղումների պատճառով), այդ դեպքում վճարումը կարող է, ըստ բժշկի ցուցումի, կատարվել ***երկու մասով՝*** *կանխավճար, որը ուղված է հետազոտությունների ծախսերին և մնացորդային վճարին, իսկ երբ բժշկի կողմից հետազոտությունների և զննումների արդյունքում հակացուցումներ չեն հայտնաբերվել, վիրահատությունը կարող է կատարվել:*

NO REFUNDS **Կանխավճարը ենթակա չէ վերադարձի , եթե**

- ✓ ***վիրահատության համար հայտանբերված հակացուցումների պատճառով այն չի կարող կատարվել կամ շտկումների համար պահանջվում է երկարատև բուժում***
- ✓ ***պացիենտը անսպասելիորեն հրաժարվում է վիրահատությունից կամ բաժանմունքում գտնվելուց***
- ✓ ***խախտվում են բժշկական կենտրոնում գտնվելու պայմանները, որի պատճառով տնօրինությունը դրդված է դուրս գրել պացիենտին***

Վճարման գործընթացից հետո բուժող բժիշկը կամ վիրաբուժական բաժանմունքի ավագ քույրը Ձեզ ներկայացնում է ուղեկցող բուժքույրին, որը այդ փուլում ուղեկցում է և կազմակերպում լաբորատոր և գործիքային հետազոտությունների կատարումը, այլ նեղ մասնագետների հետ խորհրդատվություն և տարբեր կազմակերպչական, այդ շրջանին բնորոշ հարցեր:

Մինչ այդ Ձեզ ուղեկցում են հետագա կացության համար նախապատրաստած հիվանդասենյակ, որտեղ ստանում եք նոր ներհիվանդանոցային **հագուստ, հիգիենայի պարագաներ, սրբիչ:**

Վերահանդերձավորվելուց հետո բուժքույրը ուղեկցում է նախապես համաձայնեցված հետազոտությունների և նեղ մասնագետների հետ խորհրդատվությունների:

Կարևոր է իմանալ

- **եթե ցանկություն ունեք օգտվել հիվանդասայլակից, վստահորեն տեղեկացրեք բուժանձնակազմին: Անհրաժեշտության դեպքում**

ուղեկցող բուժքույրը անմիջապես կտրամադրի այն:

- **լաբորատոր անալիզների մեծ մասի համար պարտադիր է ներկայանալ անոթի, ուստի խստագույնս հետևեք արդեն նշված տնային պայմաններում նախապատրաստական բացատրություններին:**

- **եթե նախապատրաստական շրջանում պարզվում է, որ որևիցէ հետազոտության արդյունքում վիրահատությունից առաջ պետք է հավելյալ հետազոտվեք կամ ստանաք դեղորայքային բուժում այն ուղեկցող կամ հիմնական հիվանդության համար, ապա Ձեր վիրահատությունը կարող է հետաձգվել անորոշ ժամանակով:**

ԿԱՐԵՎՈՐՈՒՄ ԵՆՔ Ձեր լիարժեք աջակցությունը և ըմբռնումը, քանի որ վիրահատական միջամտությունը շտապեցնելով կամ անտեսելով որևիցե հանգամանք, որը ըստ բժիշկների կարծիքի կարող է վտանգել վիրահատության բարեհաջող ընթացքը կամ ընդհանուր ինքնազգացողությունը՝ ունի բարդությունների առաջացման կտրուկ աճի հավականություն և այն չարժե թերագնահատել:

ՀԵՏԵՎԱԲԱՐ նման իրավիճակում եթե վիրահատությունը 1-3 օրով հետաձգելը կարող է օգնել շտկել հայտնաբերված խնդիրները, ապա դա կատարվում է կամ տնային պայմաններում կամ ցերեկային ստացիոնար պայմաններում: Այդ պայմաններում կատարված հետազոտությունները և լաբորատոր քննությունները կարող են չկրկնվել:

Այն դեպքերում երբ վիրահատության համար հակացուցում հանդիսացող հայտանբերված առողջական խնդիրների լուծման համար պահանջվում է երկար ժամանակով հետաձգել վիրահատությունը, ուրեմն պացիենտը դուրս է գրվում վիրաբուժական բաժանմունքից և անհապաղ անցնում հայտնաբերված խնդրի կարգավորմանը: **ԱՅՍ դեպքում կանխավճարը, որը պացիենտը կատարել է, ենթակա չէ վերադարձի:**

Հաջորդիվ բուժող բժիշկը, մանրակրիտ զննելով ստացված հետազոտությունների պատասխանները, վիրահատական այն դաշտը, որը արդեն տնային պայմաններում պատրաստել էիք (կամ պատրաստել եք հիվանդանոցային պայմաններում) տալիս է հավելյալ մեկնաբանություններ:

Աշխատեք տալ շատ հարցեր, ստանալ սպառիչ պատասխաններ բոլոր հարցերին, նույնիսկ եթե նրանք թվում են ամոթալի կամ ծիծաղալի: Մեր

բժշկական ամբողջ անձնակազմը ունի պատասխաններ բոլոր այն հարցերին, որոնք վերաբերվում են Ձեր բուժմանը:

Բուժող բժիշկը պարտավոր է ներկայացնել Ձեր վիրահատության ընթացքի, հետվիրահատական շրջանի, հնարավոր բարդությունների, անսպասելի ընթացքի մասին մանրակրկիտ տեղեկատվություն Ձեզ համար ավելի ըմբռնելի լեզվով, նաև անհրաժեշտության դեպքում կատարել տեսացուցադրություն:

Երբ տրված տեղեկատվությունը համարված է սպառիչ և լիարժեք, Ձեզ տրամադրվում է վիրահատության համաձայնագիր, որը պացիենտը պետք է լրացնի և ստորագրի՝ հավաստելով, որ նա լիարժեքորեն տեղեկացված է և համաձայն է ինչպես վիրահատության, այնպես էլ նախատեսվելիք անզգայացման տեսակին:

Մեր բուժքույրական անձնակազմը, ստանալով համապատասխան հրահանգներ բժշկից, նաև հետևում է, որ մնաք անոթի, անհրաժեշտության դեպքում կատարվի հոգնա կամ հավելյալ մշակվի ձեր մարմնի այն մակերեսը, որտեղ պետք է բժիշկը կատարի միջամտություն:

Մեր բուժքույրական անձնակազմի առաջնահերթ խնդիրն է, որ վիրահատությունից առաջ կարողանաք լիարժեք հանգստանալ:

ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Վիրահատության առավոտ սնունդ ընդունելը կտրականապես արգելված է:

Որոշ դեպքերում վիրահատությունից առաջ կարող է առաջանալ անհրաժեշտություն, երբ բուժքույրը օգնի հագցնել ձեր ոտքերին հատուկ էլաստիկ գուլպաներ: Այդ դեպքում ձեզ հավելյալ կտեղեկացնեն:

Նշանակված վիրահատության ժամը պարզելու համար առավոտյան Ձեզ կայցելի Ձեր բուժող բժիշկը և կպատասխանի առաջացած բոլոր հարցերին և կտեղեկացնի վիրահատության սկզբի մասին:

Շատ կարևոր է, որ այս պահին հանդերձանքից բացի չկրեք հավելյալ գուլպաներ, տաք տաբատներ, բաճկոններ, այլ հագուստ:

Հանեք ձեր վրայից բոլոր զարդերը, ժամացույցը, մաքրեք կոսմետիկայի բոլոր հետքերը, եղունգների լաքը:

Վիրահատության Ձեզ կուղեկցի մեր սանիտարը և պատգարակով կտեղափոխի նախավիրահատական սրահ, որտեղ մեր անեսթեզիոլոգները կպատրաստեն Ձեզ վիրահատության: Այնուհետև կտեղափոխեն ժամանակակից վիրահատական սրահ, որտեղ կկատարվի վիրահատությունը:
Ոտնամանները, որոնք վիրահատության սրահում դուք հանում եք, նաև ավելորդ հանդերձանքը, կրծկալը, եվ այլն տեղափոխում ենք հետվիրահատական ինտենսիվ խնամքի սրահ, որտեղ դուք կրկին կստանաք վիրահատության ավարտից հետո:

Եթե այդ պահին ի հայտ են գալիս որոշ զարդեր կամ թանկարժեք իրեր, ապա դրանք զգուշությամբ փոխանցվում են (Ձեր բանավոր կարգավորմամբ) Ձեր կողմից նշանակված խնամյալին:

Վիրահատության ընթացքում Ձեր խնամյալները և բարեկամները պետք է գտնվեն առաջին հարկում, իսկ վիրահատության ավարտին պես բուժող բժիշկը վիրահատությունից անմիջապես հետո առաջին հարկի 101 սենյակում մանրամասն կտեղեկացնի վիրահատության ողջ ընթացքի մասին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ *Բժիշկը կամ բժշկական անձնակազմը նախապես չի կարող տեղեկացնել վիրահատության ընթացքի տևողության մասին, քանի որ այն ցանկացած անձի համար խիստ յուրահատուկ է: Հայցում ենք Ձեր*

ներողամտությունը և խնդրում ենք համբերատար սպասել վիրահատության ավարտին:

Կարող եք լինել համոզված՝ Վիրահատությունը կավարտվի այն ժամանակ, երբ բժիշկը կհամարի, որ լիարժեքորեն կատարվել է ամբողջական ծավալով այն ,ինչ պետք է կատարվի:

ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Հետվիրահատական շրջանում ձեզ որոշակի ժամանակով կտեղափոխեն ինտենսիվ հսկման սրահ, որտեղ դուք կարող եք անց կացնել մի քանի ժամից մինչև մի քանի օր, որը կախված է Ձեր առողջական վիճակից և տարած վիրահատության բարդությունից:

Այստեղ դուք գտնվում եք առավել ինտենսիվ և մանրազնին հսկողության ներքո, որտեղ ամեն վայրկյան Ձեզ հսկում են բազմաթիվ մասնագետներ և իհարկե, նաև սարքեր: Այստեղ Ձեզ կարող են միացնել թարմ թթվածնի հավելյալ մատակարարման կամ այլ սարքերի:

Ինտենսիվ հսկողության ներքո Ձեզ կարող է այցելել մեկ խնամյալ, սակայն կարող է գտնվել Ձեր կողքին ոչ ավել, քան 20 րոպե:

Նույն սրահում, սակայն առանձնացված պայմաններում, կարող են գտնվել մինչև 4 պացիենտ, որոնք նույնպես ունեն հանգստի և ինտենսիվ հսկման իրավունք:

Երբ ինտենսիվիստները և Ձեր բուժող բժիշկը գտնեն, որ Դուք հավելյալ հսկման կարիք չունեք, ապա կտեղափոխեն Ձեր հիվանդասենյակ:

Հետվիրահատական շրջանում հիվանդասենյակում Դուք կրկին գտնվում եք մեր հոգատար բուժքույրերի ուշադրության ներքո: Դեղորայքային նշանակումները. հետվիրահատական սննդակարգը, ակտիվության և անկողնային ռեժիմը գտվնում է նրանց հսկման ներքո: Ձեր առողջական վիճակը հետևում են հերթապահ բժիշկները:

Մեր հիվանդասենյակային պայմանները նախատեսված չեն խնամյալի երկար կացության համար, քանի որ բուժքույրական անձնակազմը ի վիճակի չէ կատարել լիարժեք հոգատար հսկում, սակայն եթե ցանկանում եք, որ այդ պահին խնամյալը լինի Ձեր կողքին, ապա կարող է:

Ցանկանում ենք կրկին տեղեկացնել, որ սնվելը հիվանդասենյակում թույլատրելի է միայն պացիենտի համար: Մեր հարմարավետ ճաշարանը, որտեղ առկա է սառնարան, միկրոալիքային վառարան, թեյնիկ և այլ միջոցներ, նախատեսված են Ձեզ համար:
Վիրակապությունները կատարվում են նույն հարկում տեղակայված վիրակապարանում:
Հետվիրահատական շրջանում Ձեզ մատակարարվում է երեքանգամյա սնունդ և ըմպելիքներ: Այդ դեպքում երբ բուժող բժիշկը թույլ է տվել, կարող եք բերել որոշ ըմպելիքներ Ձեզ հետ, որի համար վիրաբուժական բաժանմունքուն առկա է սառնարան:
Եթե երեկոյան ձեզ հարկավոր են հավելյալ տաք անկողնային պարագաներ, հարցրեք այն բուժքրոջից:

ՏՈՒՆ ԳՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Եվ այսպես մոտեցավ երկար սպասված դուրս գրման պահը, սակայն մի շտապեք դուրս գրվել: Սպասեք մինչ Ձեր բժիշկը նշանակի տան պայմաններում հետվիրահատական խնամքի ցուցումներ:

Այստեղ այն հարցերն են, որոնք շատերը մոռանում են հարցնել

- երբ կարող եմ լողանալ
- եթե վիրակապը պոկվում է, ինչ անեմ
- կարող եմ խմել սուրճ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

- կարող եմ գալ վիրակապության, եթե ես ինքնուրույն չեմ կարողանում կատարել ձեր ցուցմունքները
- ինչ անել, երբ ջերմությունս բարձրացել է
- կարող եմ ունենալ անաշխատունակության թերթիկ

Հորդորում ենք տալ հնարավորինս շատ հարցեր, իսկ եթե որոշ հարցեր մոռացել եք, ապա խնդիր չէ: Հարկավոր է զանգահարել ավագ բուժքրոջը, և նա կպարզաբանի այդ հարցերը կամ հավելյալ կճշտի բժշկից և կտեղեկացնի Ձեզ:
Ձեր նշանակված օրը կրկին պետք է այցելեք բժշկական կենտրոն, ամբուլատոր պայմաններում կրկին կզննվեքի և կստանաք հավելյալ խորհուրդներ:
Յուրաքանչյուր հարցերի դեպքում, հնարավոր հետագա հանդիպումների համար տեղեկացեք բուժող բժշկից:

ՈՐՈՇ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

More Info

«Աջափնյակ» բժշկական կենտրոնը չի կրում որևիցե պատասխանատվություն անձնական իրերի, թանկարժեք պարագաների և դրամի կորստի համար և հորդորում ենք բոլոր թանկաժեք իրերը, դրամը և այլ իրենից արժեք ներկայացնող պարագաները չթողնել առանց հսկողության:

- Տեղեկացնում ենք, որ անհատական հիվանդասենյակները հնարավոր չէ կողպել ձեր բացակայության դեպքում:
- Բոլոր զարդերը և թանակարժեք իրերը ցանկալի է թողնել տանը:
- ԲՈԼՈՐ վճարումները կատարվում են դրամարկղում, ցանկացած այլ վճարում համարվում է անթույլատրելի:

Հավելյալ տեղեկատվություն պացիենտի մասին աշխատանքային ժամերից դուրս կարող եք ստանալ՝ զանգահարելով (010) 38-00-88, հետևել հրահանգներին՝ հավաքելով 107:
Առավելագույն խոսակցության ժամանակահատվածը պետք է լինի ոչ ավել, քան 5 րոպե:

Եթե ձեզ հարկավոր է տաքսի, ապա մեր ադմինիստրատորները կօգնեն այդ հարցում

Վճարովի ծառայություններ, որոնք հասանելի են մեր պացիենտներին, դրանք են՝

- Ամբուլատոր թերապևտիկ և վիրաբուժական ավելի, քան 25 տարբեր նեղ մասնագետների խորհրդատվություն
- Ախտորոշիչ ավելի, քան 12 տարբեր բժշկական խորհրդատվություններ
- Լաբորատոր հետազոտություններ
- Սուրճ, թեյ, զովացուցիչ ըմպելիքները ապարատներ
- Առանձնացված լյուքս դասի հիվանդասենյակներ

Կարևոր է իմանալ՝ Մեկ անգամ դիմելով մեզ՝ մեզ համար դուք մնում եք մեր գործընկերը, որը կարող է ցանկացած ժամանակ կրկին այցելել տարատեսակ առողջական հարցերով՝ լինելով վստահ, որ մենք միշտ կփորձենք անել առավելագույնը՝ ապահովելով ամենաթանկագինը՝ Ձեր առողջությունը

Հարգանքով,
Ձեր՝ «ԱՋԱՓՆՅԱԿ» բժշկական կենտրոն

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0017, Աբելյան փողոց 8/1

Հեռ. (010) 38-00-88, 38-00-44, 38-00-04, (099) 38-00-44

E-mail: info@ajapnyakmc.com
WEB: www.ajapnyakmc.com

"ԱՋԱՓՆՅԱԿ" Բժշկական Կենտրոն
ՀՀ, Երևան, 0017, Աբելյան 8/1
Հեռ. (010) 38-00-88, 38-00-44, 38-00-04
(099) 38-00-44
www.ajapnyakmc.com
info@ajapnyakmc.com